

1830, էջ 325, եւ Տէր-Արրահամեան Յ.,
Պատմ. Խրիմու, Թէոդոսիա, 1865, Մասն Բ.
էջ 153):

Հռոմ երթալու մասին Սարգսի գրած, եւ
առ հասարակ իր ինձ ծանօթ վերջին նամակն է
14 Յունիս 1773ին առ Հ. Գր. Նէփօթ գրածը
(Գիւ. Անտոն.), զոր այստեղ յառաջ կը բե-
րեմ, եւ կը դնեմ նաեւ նմանահամութիւնը՝
չորս անգամ պզտիկցուած՝ իսկ իր ստորագրու-
թիւնը ճիշդ բնական մեծութեամբ:

Աստուծով

Հասցե գիրս ի անու չ. Գրիգոր անփոթին Սարգիս
եպիսկոպոսէն (ասոր կից օտար զոմ անշուշտ
չ. Գրիգորէն գրուած, հասնելու օրն՝) 1773 յունիսի 19

Խոնեմագարդ Տեսուն Տեսուն չ. Գրիգոր մագրա-
կոսն փարդապետի սիրով եւ յարգանքով ողջուն ըն-
ծայեմ:

Ի Լիկոնոնայ 1773 յունիս 14:

Ի յունիսի 5ին գրեալ գրոյդ ծանեայ զո-
մանս խորհրդականս ծանօթութիւնս եւ իրակու-
թիւնս թագունս վասն իմ ի կողմանէ սրբազան
Քահանայապետին, հաղորդեալ քեզ թագնաբար
ի Գերապայծառ Մօնսինեօր Գրիգօստօճոյէն, եւ
չնորհակալ եմ զայդմանէ: Աստի ընդ այս գրոյս
եղեալ գիրն իւր կնքովն խիստ ծածկապէս գու-
ինքնին ձեռամբդ տայցես նմա. եւ փոխադարձա-
պէս՝ եթէ ինքն եւս տայցէ քեզ խորհրդաբար
զգիր իմն առ իս առաքելի՝ աղաչեմ, զի ի մէջ քո
գրոյդ եղեալ յղեսցես զայն. եւ զբոլոր ծախսն
փօստիցն համանշանեսցես ի յիմիք տեղւոջ. զի
Աստուծով ի ժամանակին զընաւան հատուցից
հրամանուցդ: Նաեւ Սիրելի եղբօր մերոյ Գերա-